



Հավելված թիվ 1
ՀՀ փաստաբանների պալատի նախագահի
07.08.2017թ. թիվ 225-Լ որոշման

Ծ Ա Ն ՈՒ Ց ՈՒ Մ

ՀՀ փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով հրավիրելու մասին

ք. Երևան, Զաքիյան 2

07.08.2017թ.

Հարգելի փաստաբաններ,

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ **2017 թվականի սեպտեմբերի 9-ին, ժամը 09⁰⁰-ից մինչև 18⁰⁰-ն ՀՀ փաստաբանների պալատի՝ Երևան քաղաքի Զաքիյան 2 հասցեում գտնվող վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) տեղի է ունենալու Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցերով.**

- ՀՀ փաստաբանների պալատի նախագահի ընտրություն.
- ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության (1.5 կետի) փոփոխության հաստատում:

1. Օրակարգային հարցերով **քվեարկությունը** սկսվում է 2017 թվականի սեպտեմբերի 9-ին, ժամը 09⁰⁰-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 18⁰⁰-ին:

2. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի **թեկնածուների առաջադրումը (ինքնաառաջադրումը)** սկսվում է 2017 թվականի օգոստոսի 12-ից (ներառյալ) և ավարտվում է 2017 թվականի օգոստոսի 17-ին (ներառյալ):

3. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի **թեկնածուների քարոզչությունը** սկսվում է 2017 թվականի օգոստոսի 18-ից (ներառյալ) և ավարտվում է 2017 թվականի սեպտեմբերի 7-ին, ժամը 18⁰⁰-ին:

4. Յուրաքանչյուր փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**

5. Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**

6. Քվեարկության գաղտնիությունը քվեարկող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն:

Ընդհանուր ժողովի հետ կապված անհրաժեշտ այլ տեղեկություններին կարող եք ծանոթանալ ՀՀ փաստաբանների պալատի www.advocates.am կայքէջից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմ